

Աննա Գ. Ասատրյան
Արվեստագիտության դոկտոր

ԱՌՆՈ ԲԱՔԱՋԱՆՅԱՆ. ԴԻՄԱՆԿԱՐԻ ՆՐՔԱԳԾԵՐ

Ականավոր կոմպոզիտորի ծննդյան 90-ամյակի առիթով*

«Առնո Բաբաջանյանը մեկն էր այն քչերից,
ու՜մ անունն ու ստեղծագործությունը նվաճեցին
համաժողովրդական սեր և ճանաչում:
Ես երջանիկ եմ, որ այդպիսի ընկեր եմ ունեցել»¹:
Էդվարդ Միրզոյան

11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200

2011թ. հունվարի 22-ին լրացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ Պետական մրցանակների դափնեկիր, ականավոր կոմպոզիտոր և տաղանդավոր դաշնակահար Առնո Հարությունի Բաբաջանյանի ծննդյան 90-ամյակը:

Սրանից ճիշտ 28 տարի առաջ՝ 1983 թ. նոյեմբերի 11-ին, ոչ միայն հայ ժողովուրդը այլև ողջ Խորհրդային Միությունը ցնցվեց Առնո Բաբաջանյանի անժամանակ մահվան գույժից: Կորուստն անդառնալի էր, ցավը՝ անամոքելի: «Առնոյի հուղարկավորությունը, - վերհիշում է Ալ. Հարությունյանը, - առանց չափազանցության, իսկապես համաժողովրդական վշտի անկեղծ դրսևորման վերածվեց: Անընդհատ հնչում էին հրաժեշտի հուզումնալից խոսքեր, իսկ ես մի տեսակ մթագնության մեջ էի ու այդ խոսքերի իմաստը չէի ընկալում: Այդ դառը թուպեներին աչքերիս առջև սլացավ համատեղ ապրած մեր ողջ կյանքը»²:

Երջանիկ աստղի տակ էր ծնվել Ա. Բաբաջանյանը: Նրա ստեղծագործությունների զգալի մասն առաջին իսկ կատարումից հետո ոչ միայն արժանանում էր պետական բարձր պարգևների ու երաժշտական քննադատության հիացական գնահատականներին, այլև վայելում մեծ ժողովրդականություն: Իսկ նրա երգերը, որոնք այսօր էլ չնվազող սիրով ու ոգևորությամբ կատարվում են հայերեն ու ռուսերեն լեզուներով, ստեղծման առաջին իսկ օրերից դառնում էին հանրահայտ: Դրանք երգում էր ողջ խորհրդային երկիրը՝ Կալինինգրադից մինչև Վլադիվոստոկ, Մոսկվայից՝ Երևան...

Այսօր կարող ենք վստահաբար ասել, որ հայ (և ոչ միայն հայ) երաժշտագիտության մեջ վաղուց արդեն ձևավորվել ու բեղմնավոր ճանապարհ է

* Ընդունվել է տպագրության 21. 5. 2010:
1 Эдвард Мирзоян. Фрагменты. Ереван, “Амроц групп”, 2005, с. 281.
2 Ալեքսանդր Զարությունյան, Զուշեր, Եր., «Արճեշ», 2000, էջ 96:

11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200

անցել բարաջանյանագիտությունը: Ա.Բարաջանյանը հայ կոմպոզիտորական հզոր բանակի այն սակավաթիվ ներկայացուցիչներից է, ում ստեղծագործական և կատարողական գործունեությունը դեռևս կենդանության օրոք արժանացել է երաժշտագետների սևեռում ուշադրությանը: Բավական է նշել, որ արդեն 1961-ին քառասնամյա երգահանի մասին Մոսկվայում և Երևանում միաժամանակ լույս են տեսել երկու մենագրություններ՝ Սեդա Թաշյանի³ և Անահիտ Գրիգորյանի⁴ ուսումնասիրությունները: Իսկ Ա.Բարաջանյանի մահից հետո՝ 1985-ին, հրատարակվել է Մուսաննա Ամատունու հետազոտությունը⁵, որը նվիրված է մեծ երգահանի գործիքային ստեղծագործությանը: Ա.Բարաջանյանի մասին վերջին ուսումնասիրությունը լույս է տեսել ճիշտ տասը տարի առաջ՝ 2001-ին: Խոսքը մոսկվայաբնակ երաժշտագետ Սիխայիլ Տեր-Օհանյանի⁶ մենագրության մասին է, որտեղ հեղինակն առաջին անգամ ընդգրկել է կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության բոլոր ժանրերը:

Հընթացս անցած տասնամյակների՝ Ա.Բարաջանյանի ստեղծագործական ու կատարողական գործունեության մասին հայ և խորհրդային երաժշտագետները գրել են մաս բազմաթիվ գիտական հոդվածներ, նրա առանձին երկերի հանգամանալի ուսումնասիրությանն անդրադարձել իրենց մենագրություններում⁷:

3 Տե՛ս **Թաշյան Սեդա**, Առն Բարաջանյան, Եր., 1961:

4 Տե՛ս **Григорян Анаида**. Арно Бабаджанян, Москва, “Советский композитор”, 1961, 61 с. с илл. и нот. илл., 1л. портр.

5 Տե՛ս **Аматуни Сусанна**. Арно Бабаджанян. Инструментальное творчество. Исследование, Ереван, “Советакан грох”, 1985.

6 Տե՛ս **Тероганян Михаил**. Арно Бабаджанян. Москва, “Композитор”, 2001.

7 Տե՛ս **Ամիրադյան Գ.**, Սոր մատենագիտությունը Առն Բարաջանյանի մասին: Նվիրվում է Առն Բարաջանյանին, Եր., 2008, էջ 124-129: **Գյողակյան Գ.**, էջեր հայ երաժշտության պատմությունից (գիտ. խմբ.՝ Ա.Մուշեղյան), Եր., 2009, **Գյողակյան Գ.**, Հզոր տաղանդ, անկրկնելի անհատականություն: Նվիրվում է Առն Բարաջանյանին, էջ 6-17: **Զուրաբյան Ժ.**, Առն Բարաջանյանը երգի վարպետ, «Երաժշտական Հայաստան», 2006, թիվ 4 (23), էջ 2-3: **Զուրաբյան Ժ.**, Առն Բարաջանյանը երգի վարպետ: Նվիրվում է Առն Բարաջանյանին, էջ 115-119: **Զուրաբյան Ժ.**, Թեմատիկ ինտոնացիոն արտահայտչության ազգային հենքը Առն Բարաջանյանի «Հերոսական բալլադում»: Նվիրվում է Առն Բարաջանյանին, էջ 40-47: **Զուրաբյան Ժ.**, Ունիք-Երանգի պարեղանակի մշակում-վերադրուհումները հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, «Երաժշտական Հայաստան», 2006, թիվ 4 (23), էջ 21-29: **Սահակյան Ն.**, Առն Բարաջանյանի երաժշտության նոր ծայնագրություններն ու հրատարակությունները: Նվիրվում է Առն Բարաջանյանին, էջ 120-123: **Аматуни С.** О песенном творчестве Арно Бабаджаняна, Арно Бабаджаняну посвящается, Ереван, 2008, с. 103-114. **Аветисян Н.** Полифонические сонаты Арно Бабаджаняна и Александра Арутюняна, Арно Бабаджаняну посвящается, с. 97-102. **Апоян Ш.** Арно Бабаджанян в воспоминаниях современников, «Երաժշտական Հայաստան», 2006, թիվ 4 (23), с. 17-20. **Апоян Ш.** Арно Бабаджанян в воспоминаниях современников, Арно Бабаджаняну посвящается, с. 63-70. **Апоян Ш.** Фортепианная музыка Советской Армении, Ереван, 1968. **Геодакян Г.** Могучий талант, неповторимая индивидуальность, Арно Бабаджаняну посвящается, с. 17-28. **Геронимус А.** Героическая баллада А.Бабаджаняна, рукопись, 1955. **Григорян А.** Воспоминание об интервью, которого не было, «Երաժշտական Հայաստան», 2006, թիվ 4 (23), с. 9-10. **Джагацпанян К.** Стилистические метаморфозы музыки Арно Бабаджаняна, Арно Бабаджаняну посвящается, с. 78-83. **Золотова И.** Бабаджанян-пианист, Арно Бабаджаняну посвящается, с. 48-62. **Золотова И.** Пути развития пианизма в Армении (вторая половина XX века), исследование, Ереван, 2010. **Зурабян Ж.** Интонационные истоки и национальное своеобразие тематизма в армянской симфонической музыке 1950-61 гг., Ереван, 2002. **Кочинян Ж.** Концерт для фортепиано с оркестром Арно Бабаджаняна, «Երաժշտական Հայաստան», 2006, թիվ 4 (23), с. 50-53. **Маргарян Г.** Фортепианный концерт и его разновидности в творчестве армянских композиторов. Тенденции развития (1950-1980-е гг). Некоторые вопросы интерпретации. (Ред. А. Г. Асатрян), Ереван, 2009. **Матевосян Л.** О скрипичном концерте Арно Бабаджаняна, Арно Бабаджаняну посвящается, с. 84-96. Музыкальная культура Армянской ССР. Сб. статей, Москва, 1985. **Нестьев И.** Композиторская молодежь Армении, «Советская музыка», М., 1950, N 11. **Орлов Г.** Советский фортепианный концерт, Л., 1954. **Раабен А.** Советский инструментальный концерт, Л., 1967. **Соловцов А.** Новые фортепианные концерты, «Советская музыка», М., 1951, N 9. **Саркисян С.** Армянская музыка в контексте XX века, Москва, 2002. **Саркисян С.** Арно Бабаджанян: истоки нового стиля, Арно Бабаджаняну посвящается, с. 29-39. **Саркисян С.** Современные черты музыки Арно Бабаджаняна, Арно Бабаджаняну посвящается, с. 71-77 և այլն:

Առնո Հարությունի Բաբաջանյանը ծնվել է 1921 թ. հունվարի 22-ին Երևանում, մաթեմատիկայի ուսուցիչ, երաժշտության սիրահար Հարություն Բաբաջանյանի հարկի ներքո, որը նաև հոյակապ կերպով ֆլեյտա էր նվագում: Արդեն 3-4 տարեկանում դրսևորվում են ապագա երգահանի երաժշտական բացառիկ ընդունակությունները. նա արագորեն տիրապետում է ֆիսհարմոնին⁸ և տանը լսած մեղեդիները նվագում մանկապարտեզի դաշնամուրի վրա: Օրերից մի օր տուն գալով՝ Առնոն պատմում է հորը Մոսկվայից եկած մի «քեռու» մասին, որն այցելել էր մանկապարտեզ, ստուգել բոլոր մանչուկների լսողությունն ու երաժշտական տվյալները, ապա ցույց տվել Առնոյին և ասել. «Այս տղան անպայման պետք է երաժշտություն սովորի»: Հայրը պատասխանել էր. «Ես այդ քեռուց շուտ գիտեի, որ դու պետք է երաժշտություն սովորես»⁹: Ինչ իմանալին, որ Մոսկվայից եկած «քեռին» հենց ինքը՝ Արամ Խաչատրյանն էր: Հիրավի, քչերին է բախտ վիճակվել երաժշտության աշխարհ մուտք գործելու օրհնությունը ստանալ Ա.Խաչատրյանից, այն էլ՝ մանկապարտեզում, 4 տարեկան հասակում: Հետագայում նրանց միջև պիտի ստեղծվեր ջերմ բարեկամություն և հանճարեղ կոմպոզիտորի հանդեպ Ա.Բաբաջանյանի երախտագիտության վկայությունը՝ նրա հիշատակին նվիրված «Էլեգիա»¹⁰ դաշնամուրային պիեսը, պիտի դառնար երաժիշտների ու երաժշտասերների ամենասիրված ստեղծագործություններից մեկը: ««Էլեգիան» հարգանքի տուրք է Ա.Խաչատրյանին, խոստովանել է կոմպոզիտորը, - որտեղ ես ու Սայաթ-Նովան հանդես ենք գալիս միասին»¹¹: Պիեսում, որն անբուժելի հիվանդությամբ տառապող կոմպոզիտորի վերջին շրջանի ստեղծագործություններից էր, Ա.Բաբաջանյանն օգտագործել է Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ» երգի մեղեդին: Երգի ընտրությունը պատահական չէր. հայտնի է, որ Ա.Խաչատրյանը շատ բարձր էր գնահատում Սայաթ-Նովայի արվեստն ու մինչև իր վախճանը չէր դադարում հիանալ դրանով: Ինչպես խոստովանել է Ա.Բաբաջանյանը, հերթական անգամ այցելելով Ա.Խաչատրյանին՝ նա անձամբ տեսել է, որ վերջինս գրառում է իր հրավերով ժամանած ժողովրդական երգչի կատարմամբ հնչող՝ մեծ աշուղի երգերը: Հենց այս հիշողությունն էլ խթան դարձավ «Էլեգիայի» ստեղծման համար:

Դա՛ հետագայում: Իսկ մինչ այդ...

Իննամյա Առնոն գրում է իր անդրանիկ օրս-ը, «Պիոներական քայլերգը»՝ նվիրված հարագատ մանկապարտեզին, որը 1932-ին հրատարակում է «Հայպետհրատը»՝ 1000 օրինակ տպաքանակով: Հրատարակության նախաձեռնությունը Եղիշե Չարենցինն էր. «Մի անգամ, - հետագայում կհիշի «Հայպետհրատի» երաժշտական բաժնի ղեկավար Մ.Մազմանյանը, - Չարենցը մեզ հաղորդեց իր հիացմունքը նախորդ օրը մի շնորհալի երեխայի ունեցած ելույթի մասին. Առնոյի հեղինակած «Պիոներական քայլերգը» նրան շատ էր դուր եկել: Տեսնելով երեխայի ինքնատիպ տաղանդը, Չարենցը որոշում է խրախուսել նրան և լույս ընծայել քայլերգը»¹²: Բնագրի վրա Եղիշե Չարենցը մակագրում է՝ opus 1:

8 Ֆիսհարմոն - հարմոնի սկզբունքով կառուցված լեզվակային օդաճնշիչ նվագարան, որը ձևով հիշեցնում է փոքրիկ պիանինո, ունի դաշնամուրի ստեղնաշար և լարվածք: Հնչողությամբ հիշեցնում է երգեհոնը:

9 Эдвард Мирзоян. Фрагменты, с. 273.

10 Стен Бабаджания Арно Арутюнович. Произведения для фортепиано, Москва, «Советский композитор», 1991, с. 76-80.

11 Аматыни С. Арно Бабаджания. Инструментальное творчество. Исследование, с. 99.

12 Թաշյան Ա., Առնո Բաբաջանյան, էջ 12-13:

Բնությունը շռայլորեն էր օժտել Ա.Բաբաջանյանին: Սակայն պակաս կարևոր դեր չունեցավ նրա մասնագիտական հիմնարար կրթությունը: 1946-1948-ին Ա.Բաբաջանյանը կատարելագործվում է Մոսկվայում գործող Հայաստանի կուլտուրայի տանը կից ստուդիայում՝ կոմպոզիտորներ Հենրիխ Լիտինսկոյ և Նիկոլայ Պելյոյի, երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր Վիկտոր Յուկերմանի ղեկավարությամբ: 1947-ին Ա.Բաբաջանյանն ավարտում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ստեղծագործական ֆակուլտետը՝ ազգային երաժշտության հիմքով կոմպոզիցիայի դասավանդման դպրոցի հիմնադիր Վարդգես Տալյանի (1896-1947) դասարանը¹³: Նույն թվականին Պրազայում կայացած դեմոկրատական երիտասարդության համաշխարհային փառատոնում նրա «Վաղարշապատի պարը»¹⁴, «Պրելյուդն»¹⁵ ու «Էքսպրոմտը»¹⁶ արժանանում են առաջին մրցանակին: Եվ արդեն պարզորոշ կերպով ուրվագծվում է տաղանդավոր երգահանի հետագա ստեղծագործական ուղին:

1948 թ. Ա.Բաբաջանյանն ավարտում է Մոսկվայի կոնսերվատորիայի՝ խորհրդային պիանիզոմի դպրոցի հիմնադիրներից մեկի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, խոշոր մանկավարժ Կոնստանտին Իգումնովի (1873-1948) դաշնամուրային դասարանը¹⁷: Ուսուցիչը շատ բարձր էր գնահատում Բաբաջանյան-դաշնակահարին, որն աշակերտել էր նրան դեռևս 1942-ին՝ Երևանում, երբ այստեղ էր տեղափոխվել ականավոր դաշնակահարը¹⁸:

Ավարտական քննության ծրագրում ընդգրկված էին Ս.Տանեևի՝ դժվարության պատճառով սակավ կատարվող Պրելյուդը և ֆուգան¹⁹, Ֆ.Շոպենի էտյուդները, Ս.Ռախմանինովի Պրելյուդները, Բեթհովենի «Ապասիոնատը» և Ս.Ռախմանինովի Դաշնամուրային երկրորդ կոնցերտը: «Դիպլոմային ծրագիրը հնչեց 1948-ի հուլիսին, Մոսկվայի կոնսերվատորիայի փոքր դահլիճում, որը լեփ-լեցուն էր ունկնդիրներով, քանզի Բաբաջանյանը շատ հանրահայտ էր կոնսերվատորիայի ուսանողների և դասախոսների շրջանում: Տանեևի Պրելյուդի և ֆուգայի կատարումը գերազանցեց բոլոր սպասելիքները: Ռախմանինովի Պրելյուդները հնչեցին այնպես, որ ծերունագարդ երաժիշտներից շատերը խոստովանեցին. «Փակում ես աչքերդ և թվում է, թե նվագում է ինքը՝ Սերգեյ Վասիլևիչը», իսկ համերգի ավարտին հնչած Ռախմանինովի Կոնցերտը դարձավ իսկական գագաթնակետը: Թե ինչ էր կատարվում դրանից հետո արտիստական սենյակում՝ դժվար է պատկերացնել. շատերի աչքերին արցունքներ, հիացական բացականչություններ, ջերմ գրկախառնություններ...»²⁰:

13 Վ.Տալյանի սաներից են Ալ.Հարությունյանը, Էդ.Միրզոյանը, Ղ.Սարյանը, Ա.Խուրդյանը, Ա.Մերանգուլյանը, Ռ.Աբաջանը և այլք:

14 Տե՛ս Бабаджанян Арно Арутюнович. Произведения для фортепиано, с. 15-19.

15 Տե՛ս նույն տեղում, էջ 3-4:

16 Տե՛ս նույն տեղում, 11-14:

17 Կ.Իգումնովի սաների թվում էին Լև Օբորինը և Յակով Ֆլիերը: Եվ ինչպես հետագայում նկատել է Յա.Ֆլիերը՝ «Կոնստանտին Նիկոլակիչը կեղծ հնչյունները ներում էր, իսկ կեղծ հոգին՝ երբեք»: Տե՛ս Эдвард Мирзоян. Фрагменты, էջ 272).

18 Այդ օրերին Ֆիլիարմոնիայի փոքր դահլիճում կայանում է Կ. Իգումնովի հորեյանական համերգը, որտեղ Բաբաջանյանը նվագում է Բալակիրևի «Իսլամեյը»: Կատարումից հետո Իգումնովը Բաբաջանյանին ասում է. «Կարող ես համարել, որ «Իսլամեյից» հետո որևէ ստեղծագործություն քեզ համար դժվարություն չի ներկայացնի» (տե՛ս Ալեքսանդր Հարությունյան, Գուշեր, էջ 19):

19 Ֆուգա (լատիներեն՝ fuga՝ վազք, փախուստ) - պոլիֆոնիկ երաժշտության առավել կատարյալ ձև, որը հիմնված է բոլոր ձայներում տոնայնական որոշակի հաջորդականությամբ մեկ, երկու, սակավ՝ երեք և հազվադեպ՝ չորս թեմաների բազմակի անցկացման վրա:

20 Арутюнян А. Арно, «Երաժշտական Դայաստան», 2006, թիվ 4 (23), с. 12.

Ասում են, թե դիպլոմային քննության ժամանակ քննական հանձնաժողովի անդամները խնդրում են Բաբաջանյանին նվագել ծրագրից դուրս. նա նվագում է սեփական Պրեյլերը՝ գրված Սկրյաբինի ոճով և մոլորության մեջ գցում հարգարժան պրոֆեսորներին. նրանց թվում է, թե լսում են Սկրյաբինի՝ իրենց անհայտ ստեղծագործությունը: Հավարտ քննության՝ Բաբաջանյանը կատարում է «Վադարշապատի պարը»:

Կ.Իգումնովը, գիտակցելով, որ Ա.Բաբաջանյանը բացառիկ տաղանդի երաժշտական անհատականություն է և իր ձեռքերի կառուցվածքի շնորհիվ կարող է հեշտությամբ նվաճել դաշնամուրային տեխնիկայի բարձունքները, դեռևս ուսումնառության տարիներին բազմիցս խորհուրդ էր տալիս. «Առնո՛ւ, աղավնյակս, ախր, ինչո՞ւ՞ եք Դուք երաժշտություն հորինում: Ախր մենք մեծ դաշնակահար ենք կորցնում»²¹: Իսկ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Սվյատոսլավ Ռիխտերի համոզմամբ՝ «Նա խոշորագույն դաշնակահար էր... Բայց երաժշտություն էր գրում: Նվիրվելով ստեղծագործությանը՝ որպես դաշնակահար հանդես էր գալիս միայն իր գործերի կատարմամբ»²²:

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Էմիլ Գիլելսը, որն իր գնահատականներում ծայրահեղ խիստ էր, խոսելով Բաբաջանյան-դաշնակահարի բացառիկ օժտվածության մասին, նրան անվանել է «ցնցող դաշնակահար» և խոստովանել, որ եթե նա ընտրեր այդ ուղին, ապա կդառնար հռչակավոր դաշնակահար²³:

Ինչպես հետագայում կհիշի Ա.Բաբաջանյանի սան, խորհրդահայ երգեհոնային դպրոցի հիմնադիր, երգեհոնահար, դաշնակահար Վահագն Ստամբոլյանը, իր ուսուցչի ձեռքերն ապշեցնում էին իրենց ուժով և զարմանալի զգայունությամբ. «Այդպիսի ձեռքեր ես չեմ տեսել ոչ մեկի մոտ»²⁴:

Ա.Բաբաջանյանն առանձնապես հռչակվեց իր ստեղծագործությունների կատարմամբ: Ուստի պատահական չէ, որ նրա ստեղծագործական ժառանգության կարևոր մասն է կազմում գործիքային երաժշտությունը. իր սիրելի, պաշտելի դաշնամուրին նա դիմեց ստեղծագործական առաջին քայլերից և հավատարիմ մնաց ողջ կյանքում: Հենց դաշնամուրային գործերում առավել լիարժեք ու հետևողականորեն բացահայտվեցին երգահանի ստեղծագործական գործունեության բոլոր փուլերը:

Ա.Բաբաջանյանի վաղ շրջանի գործերից են Լարային N 1 կվարտետը (1943), Դաշնամուրային կոնցերտը (1944), Լարային N 2 կվարտետը (1947) և Ջութակի կոնցերտը (1949)²⁵:

Դաշնամուրային կոնցերտը²⁶ Ա.Բաբաջանյանի խոշոր կտավի առաջին ստեղծագործություններից էր, որը հեղինակը նվիրեց Հայաստանում խորհրդային

21 Золотова И. Пути развития пианизма в Армении (вторая половина XX века), исследование, Ереван, 2010, с. 120.

22 Նույն տեղում:

23 Տե՛ս Ափյան Ս. Արնո Բաբադջանյանը և հիշատակումները, «Երաժշտական Հայաստան», 2006, թիվ 4 (23), с. 17.

24 Маргарян Г. Жанр фортепианного концерта в творчестве армянских композиторов. Тенденции его развития (1950-1980-е гг.), Ереван, 2009, с. 38.

25 Ջութակի կոնցերտը 1972-ին ձայնագրվել է Վ.Սոկաջյանի և ՀԽՍՀ պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, դիրիժոր՝ Մ.Մալուցյան, իսկ 1973-ին «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայել Կոնցերտի կլավիրը:

26 Տե՛ս Կочинян Ж. Концерт для фортепиано с оркестром Арно Бабаджаняна, «Երաժշտական Հայաստան», 2006, թիվ 4 (23), р. 50-53.

կարգերի հաստատման 25-ամյակին: Տարիներ անց՝ 1978-ին, կոմպոզիտորը խոստովանել է, թե «հենց Դաշնամուրային առաջին կոնցերտից էլ կարելի է սկսել իմ ստեղծագործական կենսագրությունը»²⁷: Կոնցերտի առաջին մասն առաջին անգամ հնչեց 1944-ին՝ Թբիլիսիում, հեղինակի կատարմամբ՝ հրմթաց Անդրկովկասյան հանրապետությունների երաժշտության տասնօրյակի և ըստ արժանվույն գնահատվեց ունկնդիրների կողմից²⁸: 1946-ին ՀՍՄՀ Կուլտուրայի մինիստրության մրցանակաբաշխությունում այս Կոնցերտի համար Ա. Բաբաջանյանն արժանանում է երկրորդ մրցանակի: Երկրորդ անգամ Կոնցերտը կատարվեց Մոսկվայում, 1947-ին ու այլև լռեց՝ չիրատարակվեց, և անգամ կորսվեց նրա ձեռագիրը...

1950-ին Ա.Բաբաջանյանը վերադառնում է հայրենիք և դասավանդում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային դասարանում՝ շարունակելով նաև ստեղծագործել: Նույն թվականին Ալ.Հարությունյանի հետ ստեղծված «Հայկական ռապսոդիան» լայն ժողովրդականություն է վայելում՝ հեղինակների անգուգական կատարմամբ հնչելով աշխարհի տարբեր բեմահարթակներում:

Ա.Բաբաջանյանի անհատական ոճը լիարժեք դրսևորվել է «Հերոսական բալլադում» (1950, ԽՍՀՄ Պետական մրցանակ՝ 1951), ապա՝ Դաշնամուրային տրիոյում (1952, ԽՍՀՄ Պետական մրցանակ՝ 1953): 1959-ին նա գրում է Ջութակի և դաշնամուրի տոնատը, 1962-ին՝ Թավջութակի կոնցերտը, իսկ իր Լարային N 3 կվարտետը նվիրում Գ.Շոստակովիչի հիշատակին՝ ի նշան մեծ կոմպոզիտորի նկատմամբ տաժած անկեղծ հարգանքի:

Դաշնամուրի և նվագախմբի համար գրված «Հերոսական բալլադը»²⁹, դառնալով ողջ խորհրդային երաժշտության մեծ նվաճումը, նոր էջ բացեց հայ գործիքային կոնցերտի պատմության մեջ՝ հեղինակին բերելով ԽՍՀՄ Պետական մրցանակ ու համաշխարհային հռչակ: Կոմպոզիտորն այն անվանել է սիմֆոնիկ վարիացիաներ՝ դաշնամուրի և սիմֆոնիկ նվագախմբի համար: «Սրանում հեղինակը արտացոլել է մեր իրականության առավել էական կողմերն ու գծերը՝ իսկական հումանիզմը, հերոսականությունն ու լավատեսությունը»³⁰: «Հերոսական բալլադն» առաջին անգամ կատարել են հեղինակը և սիմֆոնիկ նվագախումբը՝ Ս.Չարեքյանի ղեկավարությամբ, 1950-ին: Հետագայում այս ստեղծագործությունը բազմիցս հնչել է Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բրյուսելում, Վիեննայում: Բացի հեղինակից, «Հերոսական բալլադը» կատարել են Էմիլ Գիլելսը, Վիկտոր Մերժանովը, Լև Վլասենկոն, Արմեն Բաբախանյանը, Կարինե Օհանյանը և ուրիշներ: Ավելին՝ 1985-ին «Հերոսական բալլադը» բեմ բարձրացավ Երևան-

27 Митинян А. О фортепианном концерте Арно Бабаджаняна, «Երաժշտական Զայաստան», 2006, թիվ 4 (23), с. 55-56

28 Տասնօրյակի շրջանակներում Կոմիտասի անվան լարային կվարտետի կատարմամբ հնչել է նաև Ա.Բաբաջանյանի Առաջին մեկմասանի կվարտետը, իսկ հայկական կամերային երաժշտության համերգի ծրագիրը եզրափակել է նրա Պարը երկու դաշնամուրի համար՝ հեղինակի ու Ալեքսանդր Զարությունյանի կատարմամբ:

29 Տե՛ս Маргарян Г. Жанр фортепианного концерта в творчестве армянских композиторов. Тенденции его развития (1950-1980-е гг.), Ереван, 2009, с. 37-49. Зурабян Ж. Интонационные истоки и национальное своеобразие тематизма в армянской симфонической музыке 1950-61 гг., Ереван, 2002, с. 66-73.

30 Коптев С., Тэрьян М., Рухкян М. Симфоническая музыка и инструментальный концерт, Музыкальная культура Армянской ССР. Сб. статей, Москва, 1985, с. 175.

նի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական քատրոնում և Աշոտ Ասատուրյանի սցենարով բեմադրվեց որպես բալետ-մեկնասանի սիմֆոնիա (խորեոգրաֆիկ սիմֆոնիա)³¹:

Տրիոն դաշնամուրի ջութակի և թավջութակի համար, որը խորհրդային կամերային երաժշտության նշանակալի ձեռքբերումներից էր, հաջողությամբ կատարվեց Երևանում և Մոսկվայում ու հեղինակին բերեց ԽՍՀՄ Պետական մրցանակ: Առաջին կատարողներն էին Դ.Օյստրախը, Ս.Կնուշևիցկին և հեղինակը: Ա. Բաբաջանյանի ստեղծագործության հետազոտողները գտնում են, որ «Իր գաղափարական մտահղացմամբ, համադրվող կերպարների սուր կոնֆլիկտայնությամբ, զարգացման նպատակամղվածությամբ, անկեղծությամբ և անմիջականությամբ Բաբաջանյանի Տրիոն դեռևս XIX դարավերջին ռուսական երաժշտության մեջ հաստատված սզո տրիոյի ավանդույթի շարունակությունն է, թեև չունի որոշակի նվիրում»³²: Տրիոն չունի ծրագիր, սակայն նրա բնույթն ու երաժշտական շարադրանքը կռահելի են դարձնում ծրագրային մտահղացման առկայությունը: Ստեղծագործության զարգացման գիծը պայմանավորում է նրա լայտմոտիվը³³, որն առաջին անգամ հնչում է նախաբանում. «...Տրիոյի ողջ երաժշտությունն ընկալվում է որպես քնարական խռովահույզ մի պատում՝ մարդկային ուժեղ անհատականության կյանքի ճանապարհին ծառայած ողբերգական խոչընդոտների դեմ պայքարի մասին: Որպես այս ողբերգական խոչընդոտների ընդհանրացված կերպար հանդես է գալիս վերոհիշյալ լայտմոտիվը: լայտմոտիվի ողբերգական կերպարին հակադրված են երաժշտական մյուս կերպարները»³⁴, - գրում է արվեստագիտության դոկտոր Գ. Գյոդակյանը: Տրիոյի կարևոր առանձնահատկություններից է սիմֆոնիզմը, որն արտահայտվում է ինչպես երաժշտական գաղափարի հետևողական զարգացման դրսևորմամբ, այնպես էլ թեմաների միջանցիկ զարգացման առկայությամբ:

Ա. Բաբաջանյանի **Թավջութակի և նվագախմբի կոնցերտը**³⁵ նույնպես նշանակալի երևույթ դարձավ հայ և խորհրդային երաժշտության մեջ՝ նշանավորելով կոմպոզիտորի ստեղծագործական էվոլյուցիայի նոր փուլը: Խորապես ազգային երկմաս Կոնցերտը միաժամանակ կրում է ժամանակակից երաժշտական մտածողության դրոշմը:

Ա.Բաբաջանյանի նորարարական գործերի շարքում կարևոր տեղ են գրավում նաև նրա «Պոլիֆոնիկ սոնատը» (1947, 2-րդ խմբ.՝ 1956) և «Վեց պատկեր» շարքը (1965, ՀԽՍՀ Պետական մրցանակ՝ 1967):

Հայ և խորհրդային դաշնամուրային երաժշտության մեջ նոր խոսք դարձավ «Վեց պատկեր» (1964) դաշնամուրային շարքը: Ա.Բաբաջանյանը Խորհրդային Միությունում առաջիններից կիրառեց դոդեկաֆոն³⁶ գրելաձևը: Իր ինքնատիպ

31 Տե՛ս **Саргсян Н.** Ашот Асатурян - хореограф последней трети XX века, Ереван, «Амроц групп», 2011, с.112:

32 **Аматуни С.** Арно Бабаджанян. Инструментальное творчество. Исследование, с. 47:

33 **Լայտմոտիվ** (գերմաներեն՝ *Leitmotiv*)՝ ղեկավար եղանակ, մոտիվ) - օպերաներում, օրատորիաներում, կանտատներում, ծրագրային երաժշտության մեջ կիրառվող ցայտուն և հիշվող մեղեդային դարձվածք, որը բնորոշում է գործող անձանց զգացմունքները, տրամադրությունները, բնության երևույթները, վերացական գաղափարները և ամեն անգամ հնչում՝ ուղեկցելով դրանց:

34 **Գյոդակյան Գ.**, էջեր հայ երաժշտության պատմությունից (գիտ. խմբ.՝ Ա.Սուշեյան), Եր., 2009, էջ 134:

35 **Մանրամասն տե՛ս Ամатуни С.** Арно Бабаджанян. Инструментальное творчество. Исследование, с. 71-79:

36 **Դոդեկաֆոնիա** - 20-րդ դարի կոմպոզիտորական տեխնիկաներից է, երաժշտության հորինման մեթոդ,

շարքում հեղինակը վարպետորեն համադրեց մի կողմից՝ դրդեկափոն տեխնիկան, մյուս կողմից՝ հայ ժողովրդական մեղեդիները և ռիթմական դարձվածքները: Սա ոչ միայն փուլային նշանակություն ունեցավ կոմպոզիտորի ստեղծագործության համար, այլև դարձավ հայ դաշնամուրային երաժշտության նախընթաց չափազանց հազեցած զարգացման ինքնատիպ ամփոփում-զագաթնակետը:

Սակայն այս ամենով հանդերձ՝ Ա. Բաբաջանյանի համար բախտորոշ ժանրը երգն էր, որն ուղեկցեց նրան ստեղծագործական ողջ կյանքում: Եվ դա պատահական չէր. չէ՞ որ նրա մանկության տարիներին Երևանում տարածված ու սիրված էր Պետրոյի երգը՝ «Պետր» ֆիլմից, և Ա.Խաչատրյանի գրած այս երգի սիրահարների թվում էր նաև Առնոն:

Հենց երգերում, թատերական ներկայացումների համար գրած երաժշտության (Վ.Սարգյան, «Իմ սիրտը լեռներում է», Գ.Մունդուկյանի անվ. թատրոն), ինչպես նաև կինոերաժշտության («Հասցեատիրոջ որոնումները», «Ամպրոպի արահետով», «Անձամբ ճանաչում եմ», «Առաջին սիրո երգը», (համահեղինակ՝ Գ.Սարյան), «Անդրաշխարհյան փեսացուն», «Բաղդասարը բաժանվում է կնոջից», «Երջանկության մեխանիկա», ՀԽՍՀ Պետական մրցանակ՝ 1983), նաև՝ «Հարսնացուն հյուսիսից»³⁷, ««Մրցույթի էին ելել խոհարարները» և այլ հեռուստաֆիլմեր), մեջ էր, որ առավելագույնս դրսևորվեց Ա.Բաբաջանյանի բացառիկ մեղեդային տաղանդը:

1956-ին Բաբաջանյանը տեղափոխվում է Մոսկվա: Սկիզբ է առնում կոմպոզիտորի երկարատև ու բեղմնավոր ստեղծագործական համագործակցությունը բանաստեղծ Ռոբերտ Ռոժդեստվենսկու և երգիչ, բարիտոն, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1973) Մուսլիմ Մագոմաևի հետ, և ծնվում են “Благодарю тебя” («Շնորհակալ եմ քեզից»), “Зимняя любовь” («Չմեռային սեր»), “Пока я помню — я живу” («Քանի դեռ հիշում եմ՝ ես ապրում եմ»), “Позови меня” («Կանչիր ինձ»), “Свадьба” («Հարսանիք»), “Судьба” («Ճակատագիր»), “Вальс прощания” («Հրաժեշտի վալս»), “Такая нам судьба дана” («Այսպիսի ճակատագիր է մեզ տրված»), “Письмо” («Նամակ»), “Ноктюрн” («Նոկտյուրն»), “Прошлая осень” («Անցյալ աշունը»), “Ребята, которых нет...” («Տղաները, որոնք չկան...»), “Приснилось мне” («Երազ տեսա»), “Загадай желание” («Գուշակիր ցանկությունս»), “Встреча” («Հանդիպում»), “Моя Вселенная” («Իմ Տիեզերքը») չքնաղ երգերը:

«Ես գտա Բաբաջանյանին, Բաբաջանյանը գտավ ինձ, մենք երկուսս գտանք Ռոժդեստվենսկուն: Այդպես էլ քայլեցինք մինչև վերջ», - հետագայում կիսատոմարի Մ.Մագոմաևը³⁸: 1969 թ. ամռանը Մոսկոյում կայացած էստրադային երգի միջազգային IX փառատոնին ԽՍՀՄ միակ պատվիրակ Մ.Մագոմաևը երկրորդ

որի դեպքում երաժշտական ստեղծագործության կտավը հյուսվում է տասներկուտոնային սերիայից:
37 1973-ին «Հարսնացուն հյուսիսից» (ռեժիսոր՝ Ներսես Յովհաննիսյան) ֆիլմի համար գրված “Тополинный пух” («Բարդու նրբախավը») երգը կատարել է Վալենտինա Տոկլունովան:
38 Բաբվում ծնված խորհրդային ճանաչված երգիչ Մ.Մագոմաևի ստեղծագործությունը ներկայումս, չգիտես ինչու, փորձ է արվում դիտարկել «ադրբեջանական ազգային երաժշտության» ձեռքբերումների համատեքստում: Մինչդեռ, լեզգի հորից ու հրեա մորից սերող այդ տաղանդավոր երգչին ներկա Ադրբեջանի հետ թերևս կապում է միայն ծննդավայրի աշխարհագրական անունը: Մ.Մագոմաևի երգացանկում տեղ են գտել նաև Ա. Բաբաջանյանի մյուս երգերը՝ “Не спеши” («Մի շտապիր»), “Твои следы” («Քո հետքերը»), “Год любви” («Սիրո տարի»), “Москва-река” («Մոսկվա գետը»), “Верни мне музыку” («Վերադարձրու ինձ երաժշտությունը»), “Лучший город земли” («Աշխարհի լավագույն քաղաքը»), “Будь со мной» («Եղիր ինձ հետ»), “Солнцем опыяненный” («Արևից արբածը») և այլն:

մրցույթում կատարում է Ա.Բաբաջանյանի «Сердце на снегу» («Սիրտը ձյան վրա») երգը, որն արտակարգ ընդունելություն է գտնում և երգչին բերում գլխավոր պարգևը: Ա.Բաբաջանյանի և Մ.Մագոմաևի տանդեմը Խորհրդային Միության տարբեր ժողովուրդների ստեղծագործական դաշինքի վառ օրինակ էր, դաշինք, որի անդամներից յուրաքանչյուրն արդեն դարձել էր Խորհրդային երաժշտարվեստի յուրօրինակ Խորհրդանիշը: Ավելի քան 20 տարի առաջ կործանվեց Խորհրդային Միությունը՝ իր հետ գերեզման իջեցնելով նրա երաժշտական մշակույթը: Եվ երբ տարբեր հանրապետությունների ներկայացուցիչները հայտնվեցին բարիկադների հակառակ կողմերում, հակամարտող բանակներում, կարծես ի հեճուկս ստեղծված իրավիճակի՝ Ա. Բաբաջանյանի մահից շուրջ 20 տարի անց՝ 2002-ին, Մ.Մագոմաևը «Աստղեր, որոնք չեն մարում» շարքից ձայնագրում է «Воспоминания об А. Бабаджаняне и Р. Рождественском» («Հիշողություններ Ա. Բաբաջանյանի և Ռ. Ռոժդեստովենսկու մասին») խոսասալիկը՝ երբեմնի հզոր մշակույթի վկայությունը:

Բացառիկ էր Ա.Բաբաջանյանի և բանաստեղծներ Եվգենի Եվտուշենկոյի («Не спеши» («Մի շտապիր»), «Твои следы» («Քո հետքերը»), Անդրեյ Վոզնեսենսկու («Год любви» («Միտո տարի»), «Москва-река»³⁹ («Մոսկվա գետը»), «Верни мне музыку» («Վերադարձրու ինձ երաժշտությունը»), «Парижский снег» («Փարիզյան ձյունը»), Լեոնիդ Դերբենյովի («Лучший город земли» («Աշխարհի լավագույն քաղաքը»), «Ты приснишься мне» («Երագումս քեզ տեսա») համատեղ գրված երգերին բաժին ընկած հաջողությունը: Ա.Բաբաջանյանի երգերն իրար ետևից լույս աշխարհ էին գալիս երջանիկ աստղի տակ:

Արձագանքելով 1965-ին Կուբայում անցկացված գեղեցկության մրցույթին՝ Ա.Բաբաջանյանը գրում է «Королева красоты» («Գեղեցկության թագուհին») երգը, որն առաջին անգամ ռադիոյով հնչելով 1965-ին, անմիջապես դառնում է հանրահայտ ու դեռևս նոտաները չիրատարակված՝ ողջ ժողովուրդը երգում էր այն: Պատահական չէ, որ այս երգը համաժողովրդական հարցման արդյունքներով ճանաչվում է տարվա լավագույն երգ: Տեքստի հեղինակն էր Ա.Գորոխովը, որի հետ Ա. Բաբաջանյանի համագործակցությամբ ծնվեցին նաև «Будь со мной» («Եղիր ինձ հետ»), «Солнцем опьяненный» («Արևից արբածը») երգերը, որոնք ևս փայլուն կերպով կատարեց Մ.Մագոմաևը:

Ա.Բաբաջանյանի կինոերաժշտությունը ևս ֆենոմեն էր, քանզի կինոֆիլմերի համար գրված նրա երգերն անջատվում էին, թարգմանվում և ապրում իրենց ինքնուրույն կյանքով՝ երգվելով հանրահայտ երգիչ-երգչուհիների կողմից: «Առաջին սիրո երգը» ֆիլմից (1951) Հովհ.Գուկասյանի տեքստով գրված «Երգ առաջին սիրո»-ն ու Վ.Հարությունյանի խոսքերով հորինված «Միրո երգ» և «Իմ Երևան» երգերն անմիջապես հանրահայտ դարձան և մեծ հռչակ բերեցին հեղինակին: Իսկ ինչ վերաբերում է նրա «Սերենադին» («Երևանի սիրուն աղջիկ»), ապա այն արդեն վաղուց դարձել է ժողովրդական և քչերին է հայտնի, որ այդ երգի հեղինակը Ա. Բաբաջանյանն է: Շուտով՝ 1959-ին, «Առաջին սիրո երգը» ֆիլմի մեծ ժողովրդականություն վայելած չորս երգերը հրատարակում է «Հայպետհրատը», հայերեն և ռուսերեն տեքստերով⁴⁰: Ծանրակշիռ էր ականավոր կոմպոզիտորի

39 «Москва-река» երգը կատարել է Խորհրդային ականավոր երգչուհի Լյուդմիլա Ջիկինան: 40 Տե՛ս **Բաբաջանյան Ա.**, Երգ առաջին սիրո, Եր. Հայպետհրատ, 1959:

ներդրումը նաև գործիքային ջազի, երաժշտական-թատերական ժանրերի բնագավառներում:

Իր երգերով ու կինոերաժշտությամբ Ա.Բաբաջանյանը մեծապես նպաստեց հայկական և խորհրդային էստրադային երաժշտության զարգացմանը: Նա ազգային մեղեդիները հարստացնում էր՝ դրանք օժտելով ժամանակակից դինամիկ շիֆմերով, հարմոնիկ թարմ հնչողությամբ: Նրա երգերն ու էստրադային նվագախմբի համար գրված գործիքային ստեղծագործությունները սիրով էր ընդունում ունկնդիրը:

«Ո՞րն է Ձեր ամենասիրելի երգը» հարցին Ա.Բաբաջանյանը պատասխանել է. «Այն դեռևս չեմ գրել»: Այդպես էլ կյանքից հեռացավ երգի անգուգական վարպետը՝ դեռևս իր ամենասիրելի երգը չստեղծած: Սակայն նրա երգերը սիրեց ու երգեց ժողովուրդը: Երգեց թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն: Ա. Բաբաջանյանի երգերը այսօր էլ մեծ ոգևորությամբ կատարում են ռուսական էստրադային երաժշտության աստղերը, ռուսական ժողովրդական երգի վարպետները, օպերային երգիչները...

Իսկ ահա Առնո Բաբաջանյանի «Ազգ փառապանծը» Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ Պետական մրցանակների դափնեկիր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ, հնչում է և կինչի իբրև հավերժության ձոն հայ ժողովրդին:

Ճիշտ տասը տարի առաջ՝ 2001-ին, Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճն անվանակոչվեց Առնո Բաբաջանյանի անունով: Կարծում ենք, ներկայումս արդեն անհրաժեշտ է՝

ա. ի մի բերել տարբեր արխիվներում և մասնավոր հավաքածուներում ցրված նրա ստեղծագործական ողջ ժառանգությունը, որը դեռևս սպասում է իր երաժշտագետ-հետազոտողին,

բ. իրականացնել Ա.Բաբաջանյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի ակադեմիական բազմահատոր հրատարակությունը,

գ. մեծ երգահանի հարազատ քաղաքում՝ Երևանում, հիմնել ականավոր երևանցու՝ Առնո Բաբաջանյանի տուն-թանգարանը:

ARNO BABAJANYAN: THE SUBTLE FEATURES OF THE PORTRAIT

On the 90th Anniversary of the Eminent Composer

Anna G. Asatryan